«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Դ. Գյուրջինյան
----------20.06.2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մարիամ Արթուրի Հակոբյանի «ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» *Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին*

Գրական աշխարհի հերթագայության հոլովույթում արդիական է հետադարձ հայացք նետել դասական հեղինակների ստեղծագործությունների ժանրային, ոճական առանձնահատկությունների վրա՝ դրանք նորովի վերաիմաստավորելու համար: Այս առումով կարևոր է Մարիամ Հակոբյանի կատարած աշխատանքը, քանի որ այն համարձակ փորձ է բազմիցս ուսումնասիրության ենթարկված ամերիկյան դասական գրականության ներկայացուցիչ Ջեկ Լոնդոնի արձակը նորովի՝ նեոռոմանտիզմի գեղագիտության լույսի ներքո դիտարկելու:

Մարիամ Հակոբյանի ատենախոսության թեման **արդիական** է, քանի որ Լոնդոնի ստեղծագործությունների բովանդակային կիզակետում մարդկության ճակատագիրն է, և այն խնդիրները, որոնք շարունակում են արդիական լինել գլոբալիզացված քաղաքակիրթ աշխարհում:

Ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ամերիկյան նեոռոմանտիզմի՝ որպես առանձին

գեղարվեստական հոսանքի զարգացման գործում Լոնդոնի ստեղծագործության դերի և նշանակության հանդեպ հետաքրքրությունը վերժամանակյա է:

Աշխատանքի **գիտական նորույթը** այն է, որ Ջեք Լոնդոնը՝ որպես նեոռոմանտիկ արձակագիր, ցայսօր համակողմանիորեն ուսումնասիրված չէ, հեղինակի նեոռոմանտիկական աշխարհընկալման վերաբերյալ գիտական աշխատություններ գրեթե չկան:

Մարիամ Հակոբյանն իր ատենախոսության մեջ հետապնդում է երկու **նպատակ**. բացահայտել նեոռոմանտիզմի հիմնական առանձնահատկությունները՝ ընդգծելով դրա տեղը և դերը համաշխարհային գրականության զարգացման գործընթացում և ուսումնասիրել ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները, տարբերությունները եվրոպականից՝ շեշտադրելով ամերիկյան նեոռոմանտիզմին հատուկ գլխավոր թեմաները:

Ատենախոսության **գործնական նշանակությունը** կարևորվում է այն հանգամանքով, որ հետազոտության նյութերը կարող են օգտագործվել 19-20-րդ դարերի արտասահմանյան և ամերիկյան գրականության դասընթացների, թեմատիկ կամընտրական դասախոսությունների և սեմինարների անցկացման համար:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք՝ բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացություններից, օգտագործված գրականության, փաստական նյութի առցանց աղբյուրների ցանկից (112 անուն):

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, վերլուծության կիրառման մեթոդները, հիմնավորվում է թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, տեսական և գործնական արժեքը, սահմանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլխում («Ամերիկյան նեոռոմանտիզմի առաջացման նախադրյալները») մանրամասն ներկայացվում է նեոռոմանտիզմի ձևավորման և զարգացման պատմությունը, նեոռոմանտիզմի՝ որպես գրական հոսանքի, ձևավորման նախադրյալները և ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները Ջեք Լոնդոնի վիպարվեստի համատեքստում: Զուգահեռներ են անցկացվում անիմալիստական գրականության և կենսաբանական դետերմինիզմի հետ՝ ցույց տալու համար ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում («Մարդ-բնություն-քաղաքակրթություն շղթան Ջ. Լոնդոնի նեոռոմանտիկական ստեղծագործություններում») ատենախոսը քննության է ենթարկում մարդ-կենդանի փոխհարաբերությունները, բնություն-քաղաքակրթություն առնչությունը նեոռոմանտիզմի գեղագիտության շրջանակում: Այս գլխում ատենախոսը խնդիրը նեոռոմանտիկական դիտանկյունից վերլուծում է «Հյուսիսային պատմվածքները», «Հարավային ծովի պատմվածքները» երկերում և «Արկած» վեպում, որտեղ ներկայացվում են նեոռոմանտիկական մոտիվները և անհատի գոյապայքարը: Մարդ-կենդանի աղերսները քննվել են «Սպիտակ ժանիք» և «Նախնիների կանչը» անիմալիստական վիպակներում, իսկ բնության և քաղաքակրթության բախումը՝ «Լուսնի հովիտ» և «Բոցավառ արշալույսը» վեպերում:

Ատենախոսության **երրորդ գլխում («Բացառիկ հերոսի նեոռոմանտիկական մեկնաբանությունը Ջեք Լոնդոնի վեպերում»)** խորությամբ վերլուծվում են ուժեղ հերոսի նկարագրերը «Լուսնի հովիտ», «Երկաթե կրունկ», «Ծովագայլը» վեպերում: «Ջսպաշապիկը» վիպակում վերլուծության է ենթարկվում մտքի ճամփորդությունը՝ որպես ազատագրվելու միջոց: «Մարտին Իդենում» և «Մեծ տան փոքրիկ տիրուհին» վեպերում, նեոռոմանտիզմի դիտանկյունից, ներկայացվում է մահվան փիլիսոփայությունը, իսկ *«նոր կնոջ հայեցակարգ»*, *«նոր կնոջ տեսակ»* դրսևորումները ատենախոսը ներկայացնում է լոնդոնյան՝ «Ձյունների դուստրը»,

«Բոցավառ արշալույսը», «Երկաթե կրունկը», «Ծովագայլը» ստեղծագործություններում՝ կնոջ կերպարի վերլուծությամբ:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել ու ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Ատենախոսության սեղմագիրը և ներկայացրած տպագիր հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Ինչպես տեսնում ենք, կատարված է զգալի աշխատանք, հայցորդը փորձել է լուծել իր առջև դրված հիմնախնդիրները, ինչը, անտարակույս, նրան հաջողվել է: Բայց և այնպես կցանկանայինք ատենախոսի և մասնագիտական խորհրդի ուշադրությունը հրավիրել հետևյալ նկատառումների և առաջարկների վրա, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել գիտական հետագա գործունեության ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ դիտողությունները, որոնք ներկայացնում ենք, միտված են Մարիամ Հակոբյանի հետագա հետազոտական աշխատանքները այս թեմայի շուրջ առավել համապարփակ դարձնելուն:

- Ատենախոսության ներածության մեջ կարդում ենք. «Ամերիկյան նեոռոմանտիզմի ներկայացուցիչներն են Ջեք Լոնդոնը, Ջոզեֆ Քոնրադը, Օ. Հենրին և այլք...» (էջ 3): Նշենք, որ Ջոզեֆ Քոնրադը բրիտանացի հեղինակ է և ամերիկյան նեոռոմանտիզմի ներկայացուցիչ չի կարող լինել:
- Ատենախոսը անդրադառնում է թեմային առնչվող ուսումնասիրություններին, որտեղ նկատելի է ռուսալեզու գրականագետների գերակայությունը: Անգլիալեզու գրականագետները հիմնականում ներկայացված են մագիստրոսական աշխատանքների համատեքստում (էջ 6-8): Ինչո՞վ է դա պայմանավորված: Կարծում ենք՝ առնվազն հիշատակության է արժանի Ֆլորիդայի համալսարանի հետազոտող Ալֆրեդ Ս. Շիվերսի 1962թ. հրապարակած «Ռոմանտիզմը Ջեք Լոնդոնի ստեղծագործություններում» դոկտորական աշխատանքը, որը լոնդոնյան

գրչարվեստը ռոմանտիզմի համատեքստում դիտարկելու արժեքավոր փորձ է:

- Աշխատանքում ատենախոսը բազմիցս նշում է, որ նեոռոմանտիզմի սահմանումները հստակ չեն: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ ներկայացվեր սեփական սահմանումների առաջարկ:
- Առաջին գլխի երկրորդ ենթագլխում Ջեք Լոնդոնի ստեղծագործությունը դիտարկվում է ամերիկյան նեոռոմանտիզմի համատեքստում, իսկ նույն գաղափարների վերլուծությանը ատենախոսը կրկին անդրադառնում է երկրորդ գլխի սկզբում:
- Ատենախոսը երկրորդ գլխում անդրադառնում է բնության տոպոսին (էջ 50): Կարծում ենք, որ հետազոտությունը ավելի խորքային կլիներ, եթե առաջարկվեր բնության տոպոսի կառուցողական վերլուծություն՝ լուսաբանելով դրա ֆունկցիոնալ նշանակությունը նեոռոմանտիկական աշխարհընկալման համատեքստում:

Նշված նկատառումները հայեցակարգային չեն, զուտ առաջարկությունների բնույթ են կրում և ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը և **Մարիամ Արթուրի Հակոբյանի *«ԱՄԵՐԻԿՅԱՆ* ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»** թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, ընդհանուր բովանդակությամբ, նյութի ծավալով, աշխատանքի վերլուծական ու մեկնողական մասի հագեցվածությամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է իր հայցած Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ Համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների ամբիոնի 2025թ. հունիսի 18-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 7):

Նիստին և կարծիքի քննարկմանը մասնակցել են՝ բ.գ.թ., դոցենտ Լ. Սաֆարյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Ապրեսովան, բ.գ.թ., դոցենտ Կ. Գուլանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ջանիկյանը, բ.գ.թ., դոցենտ Ի. Պողոսյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Մարտիրոսյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Աբրահամյանը, բ.գ.թ. Թ. Անտոնյանը, դոցենտ Ռ. Գևորգյանը:

ԲՊՀ Համաշխարհային գրականության և
քաղաքակրթությունների ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ՝ Լ. Սաֆարյան

Հաստատում եմ Լիանա Սաֆարյանի ստորագրությունը՝
ԲՊՀ գիտական քարտուղար՝ Հ. Փիլավջյան